ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1/2.9-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային
հանձնաժողովի հայտերի բացման նիստի

2024թ. հունվարի 8-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 2.9 կետով նախատեսված «Armenia.travel վեբ-կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) (հայտերի բացման) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Աշոտյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Մ.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝
Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝
Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ներկայացված հայտերի բացում armeps.am համակարգի միջոցով:
2. Հայտերի գնահատման ժամկետի սահմանում:
3. Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի հաստատում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 2.9 կետով նախատեսված «Armenia.travel վեբ-կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում» միջոցառման շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

2. Ծրագրի հավելված 2-ի 2.9 կետով նախատեսված «Armenia.travel վեբ-կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում» միջոցառման իրականացման համար մրցույթին ներկայացվել է 1 (մեկ) հայտ՝ «Քոնսեփթ» ՍՊԸ-ի կողմից:

Լսեցին՝

Հայտի գնահատման ժամկետի սահմանման մասին:

Որոշեցին՝

Հայտի գնահատման ժամկետ սահմանել մինչև 2024թ. հունվարի 10–ը, ժամը 12-^{00}-ն:

Լսեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա և ժամի հաստատման մասին:

Որոշեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստն անցկացնել 2024 թ. հունվարի 10-ին, ժամը 14-^{00}-ն:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Աշոտյան - _____

Մ.Հակոբյան - _____

Շ.Հովսեփյան - _____